

Միլվա Կապուտիկյանի սիրերգությունը

XII դասարանում «Հայ գրականություն» առարկայի «Նորագույն շրջանի հայ բանաստեղծներ» թեման ուսուցանելիս նշում ենք, որ երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին, հիսունական թվականներից սկսած, Ավ. Իսահակյանին, Գ. Մահարուն, Գ. Մարյանին, Ն. Զարյանին եկավ փոխարինելու մի նոր սերունդ, որից առանձնանում էին Հրաչյա Հովհաննիսյանը, Վահագն Դավթյանը, Գևորգ Էմինը, Մարո Մարգարյանը, Միլվա Կապուտիկյանը: Կապուտիկյանի մասին Վ. Դավթյանը գրել է. «Միլվա Կապուտիկյանից առաջ ոչ ոք հայ պոեզիայում հոգեբանական այդպիսի խորությամբ ու ընդհանրապես այդպիսի ուժով չի բացել սիրող, երագող, սիրուց երջանկացող ու տառապող կնոջ հոգին»:

Կարդում եմ «Միլվա Կապուտիկյանի սիրերգությունը» թեմայով զեկուցում: Դասի այս փուլը կխթանի աշակերտներին՝ ընկալելու Կապուտիկյանի սիրային քնարերգությունը:

Միլվա Կապուտիկյանը իրական կյանքում բախտավոր սեր կարծես թե չի գտնում և կարծում է, որ սերը միայն պատրանք է, գոյություն ունի միայն երազանքների աշխարհում: Միրային մի ամբողջ շարք է գրում՝ «Օրերի հետ» խորագիր ունեցող, որտեղ հատկանշական կողմը ռոմանտիկական ընկալումն ու շունչն է ներկայացնում: Այստեղ ընդգրկվել են «Կլեոպատրա», «Ասպետական», «Անմեղություն», «Առաջին համբույր» բանաստեղծությունները:

Հեռու, հեռավոր աշխարհում անհայտ,
Եվ ճամփաներում հեռու, հեռավոր,
Շրջում է հիմի՝ սրտով վիրավոր,
Իմ երազների ասպետը հպարտ:

-Հեռու հողերում թափառող ու հեզ
Անգո ասպե՛տ, ես քե՛զ եմ սիրում,
Այդ դու ես շնչում իմ հույզերի հետ,
Ապրում կուսական իմ երազներում:

Հեծած փրփրաբաշ, ձերմակ երիվար,
Հագած պղնձե զենքեր ու զրահ՝
Թափառու՛մ է նա աշխարհից աշխարհ
Եվ ինձ է փնտրում աշխարհի վրա:

Ու միշտ՝ հայացքս դեմի ճամփեքին
Ես սպասում եմ, թե կելնե՛ս իմ դեմ,
Եվ վրնջունն եմ լսում նժույզիդ,
Ու թվում է, թե գալի՛ս ես արդեն...

Սիրահար սրտում անունն իմ մաքուր՝ Սակայն ո՛չ, դարձի՛ր, հեռացի՛ր, գնա՛,
Անցնում է ամեն ամրոց ու ոստան, Գնա շրջելու աշխարհներ նորից.
Ինձ է հարցնում՝ ընկած դռնեդուռ Անհայտ ճամփեքին միշտ ճամփո՛րդ մնա,
Ու դեռ չի՛ գտնում ճանապարհն իմ տան: Թափառի՛ր կրկին՝ երազելով ինձ:

Եվ թող մեր սիրո մաքրությունը լույս
Չաղարտե երբեք և ոչ մի համբույր.
Թող իմ պատանի սրտում սիրահույզ
Միշտ երա՛զ մնաս ու մնաս մաքու՛ր...

Հերոսուհին սարսափում է, որ իր ասպետը, երազական ոլորտներից իջնելով իրական աշխարհ, կփոխվի, ուստի և նրանից պահանջում է հեռանալ, որպեսզի սերը չշփվի իրականության հետ, մնա աննյութ, երազական: Բայց հետամուտ լինենք բանաստեղծության մտքին. նախ՝ ով է քնարական հերոսուհին. «Անգո ասպե՛տ, ես քե՛զ եմ սիրում, այդ դու՛ ես շնչում իմ հույզերի հետ, ապրում կուսակա՛ն իմ երազներում», «Թող իմ պատանի սրտում սիրահար միշտ երա՛զ մնաս ու մնաս մաքու՛ր...»: Ջգացվում է, որ խոսքը պատանեկան, երազային սիրո մասին է: «Ասպետական» բանաստեղծության մեջ գծված է երազող, գրքերի աշխարհում ապրող, սիրո առաջին համբույրը չճաշակած, սերը միայն գրքից ճանաչած, սիրո նախազգացում ապրող դեռատի կույսի իրական պատկերը: Բանաստեղծուհին շատ լավ իմացել է, որ ասպետության դարը վաղուց անցել է, բայց տղային անվանում է «ասպետ», որ «հեծած փրփրաբաշ, ճերմակ երիվար», «հագած պղնձե զենքեր ու զրահ», «սիրահար սրտում անունն իմ մաքուր՝ անցնում է ամեն ամրոց ու ոստան»: Բառերի այսպիսի ընտրությունը պատահական չէ: Այսօր հնաբույր արտահայտությունները շատ բան են ասում հերոսուհու գրքային պատկերացումների մասին: Կապուտիկյանի հերոսուհուն թվում է նաև, թե ահա գալիս է իր սիրած ասպետը, լսում է նրա նժույգի վրնջունը: Թվում է, թե երազանքն ավարտվելու է, բայց երազանքի նոր դուռ է բացվում.

Սակայն ո՛չ, դարձի՛ր, հեռացի՛ր, գնա՛,
Գնա շրջելու աշխարհներ նորից.
Անհայտ ճամփեքին միշտ ճամփո՛րդ մնա,

Թափառի՛ր կրկին՝ երազելով ինձ:

Երազանքը թող շարունակվի, թող սիրո մաքրությունը համբույրն իսկ չաղարտի, թող սերը մնա միշտ հոգի ու չմոտենա մարմնական վայելքի սահմաններին ոչ թե ընդհանրապես, այլ պատանի սրտում սիրահույզ: Այսպիսով, «Ասպետականը» քնարական հերոսուհու սիրո նախազգացման արտահայտությունն է և ոչ թե անհրական սիրո գովերգում կամ իրական սիրո վեհ զգացումի ժխտում:

Միլվա Կապուտիկյանի սիրերգությունը ամենից առաջ հոգեբանական սիրերգությունն է. մի բան, որով նա տարբերվում է ժամանակակից շատ բանաստեղծներից, իսկ նրա քնարերգությունը հայ պոեզիայի մեջ մի նոր էջ է բացում: Կապուտիկյանի քնարական հերոսը այր մարդ չէ, որին մենք հաճախ տեսնում ենք մեր դասական պոեզիայի օրինակների մեջ, այլ սիրով կինը, սիրուց երջանկացնող ու չհասկացված սիրո տառապանքները կրող կինը: Կարելի է ասել, որ բանաստեղծուհին իր ամբողջ կյանքում մի գիրք է գրել, զգացումների բազմազանությամբ լեցուն մի սիրավեպ, որ սկիզբ է առնում «Ասպետական»-ից, «Առաջին համբույր»-ից և ավարտվում է «Իրիկնաժամի երգերից», «Աշնան կանչ» բանաստեղծություններով: Միլվա Կապուտիկյանի սիրերգության մեջ բանաստեղծուհու անձնական կյանքից շատ բան կա:

Քնարական հերոսուհու տարբեր հոգեվիճակները աստիճանաբար վերածվում են իրարամերժ զգացողությունների, հակասությունները խորանում են, և հակադիր սկզբունքների ներքին պայքարը դառնում է նրա զարգացման էությունը: Այդ ներքին, իրարամերժ սկզբունքների պայքարից էլ ծնվում է ճշմարտությունը մարդու մասին.

Արի՛, արի՛, արի՛,

Թեկուզ վերջին անգամ,

Թեկուզ քայլով դժկամ,

Միայն արի՛, արի՛:

Թեկուզ անսե՛ր, անսի՛րտ ,

Թեկուզ հեզնող ու խիստ,

Թեկուզ խայթող ու բիրտ,

Միայն արի՛, արի՛:

Թեկուզ բերես դու ինձ

Մի նո՛ր դավի կակիծ,

Թեկուզ ուրի՛շ գրկից,

Միայն արի՛, արի՛...

(«Կարոտի պահին»)

Այս բանաստեղծության մեջ մի ամբողջ դրամատիկական պատմություն կա պահված, սակայն, չի պատմվում և չպիտի պատմվի էլ քնարական բանաստեղծության մեջ, որովհետև ճշմարիտ բանաստեղծությունը սկսվում է այնտեղից, որտեղ ավարտվում է պատմությունը:

Կապուտիկյանի քնարերգության մեջ չկա սիրած անձնավորության որևէ նկարագրություն, արտաքին գեղեցկության մասին խոսք: Մենք տեսնում ենք նրան, զգում, որ նա ոչ թե վերացական էակ է, այլ երկրային-հողածին մարդ, մեր կողքին կանգնած անձնավորություն, բայց ոչ կոնկրետ մեկը՝ այսինչը կամ այնինչը: Բանաստեղծուհին շատ լավ բնավի է տալիս իր սիրերգության այս առանձնահատկության համար.

Մի փնտրեք սիրո իր տողերի տակ

Մարդկանց անուններ կորած ու հայտնի.

Թվում է՝ ինձ էլ անհայտ են նրանք.

Դուք գուր մի փնտրեք, նրանց չեք գտնի:

Սկզբնական շրջանում Կապուտիկյանը փորձել է բանաստեղծություններ գրել ժողովրդական խաղերի ոճով /«Աղբյուրներ», «Ա՛յ աղբյուր» և այլն/, բայց զգալով, որ ժողովրդականից օգտվել չի նշանակում ընդօրինակել նրա կառուցվածքը, ոճն ու բառամթերքը, բանաստեղծուհին հրաժարվեց ժողովրդական այդ կեղծ ըմբռնումից: Նա բռնեց ժողովրդական երգերի ուժի երակներից մեկը՝ անմիջականությունը, որի դրսևորման ձևերից է երկխոսության կառուցվածքը:

Թե ես չեմ սիրում, չեմ սիրում քեզ,

Ինչու՞ է ձմեռն այսքան գարու՛ն,

Ձմռան արևը՝ այսքան այրու՛մ,

Անխոս երկինքը՝ այսքան անհուն,
Թե ես չեմ սիրում, չեմ սիրում քեզ:

Ու թե չենք սիրում մենք իրարու,
Ինչու՞ են աստղերն այսքան անթիվ,
Այսքան գեղեցի՛կ, գիշեր ու տիվ,
Աշխարհը այսքան հա՛շտ ու ազնիվ,
Եթե չենք սիրում մենք իրարու...

Այս բանաստեղծության հիմքում ընկած է ժողովրդական երգերից մեկը, որտեղ սիրած տղան դիմում է աղջկան հետևյալ խոսքերով.

Թե ինձ չես սիրում, չես կարոտում,
Ինչու՞ ձեր մոտի աղբյուրը թողած
Մեր աղբյուրից ես գալիս ջուր տանում:

Կապուտիկյանի սիրերգության բնորոշ կողմերից մեկն էլ անհոգ թեթևության և զգաստ լրջության, կատակի ու խոր մտածման զուգակցումն է: Հիշենք «Թափառում ենք փողոցներում» բանաստեղծությունը, որով բացվում է «Սրտաբաց զրույց» ժողովածուի «Սիրո խոսքերից» շարքը.

Թափառում ենք փողոցներում՝
Ես քո սիրով, դու՝ ուրիշի,
Այրվու՛մ ենք մենք հրդեհներում՝
Ես քո հրով, դու՝ ուրիշի:
Կարոտում ենք, խնդում, տխրում՝
Ես քո խոսքով, դու՝ ուրիշի,
Սուզվում քա՛ղցր երազներում՝
Ես քո տեսքով, դու՝ ուրիշի...

Քնարական հերոսուհու համար միևնույնը չէ, թե իր սիրած տղամարդը ում համար է թափառում փողոցներում («Բախտը խոռվ թող աշխարհում մեզ չհիշի»),

սակայն մյուս կողմից էլ նա ինչ-որ չափով հոգեկան բավականություն է ստանում, որ ինքն ապրում է սիրելով. բանաստեղծուհու ասելիքը ոչ այլ ինչ է, քան աշխարհում սիրով ապրելու ցանկությունը՝ «միայն ապրենք մենք սիրելով», որին ձգտում է և քնարական հերոսուհին:

Տարիները, ժամանակը իրենց գործը տեսնում են, «հանդարտ են հոսում այն գետակները, որ գարնանն այնպես հորդ էին ու խենթ», փոխվում է նաև քնարական հերոսուհու սերը, նրա հոգեվիճակը. նա խաղաղվում է, սառնությունը ավելի սառը պատասխանում, հրաժեշտի առաջին խոսքը ինքն է ասում, բայց չի փոխվում սիրո նրա չափանիշը. նա չի ընդունում «պաղ ու գոռոզ» սերը:

Կապուտիկյանը մեկն է այն բանաստեղծներից, որոնք անցյալի ավանդների շարունակությունը բնավ չեն ըմբռնում իբրև դասականների ստեղծածի կրկնություն: «Բնական և բնականո՞ն է արդյոք այն երևույթը, որ այժմ սիրած կինը գովերգվի նույն պատկերներով, նույն ըմբռնմամբ, ինչպես հինգ հարյուր տարի առաջ,- կարդում ենք Կապուտիկյանի զեկույցներից մեկում»:

Միլվա Կապուտիկյանի սիրերգությունը իր հոգեբանական վերլուծումներով, իր բանաստեղծական արվեստի առանձնահատկություններով տարբերվում է մեր նախորդ շրջանի քնարերգուների սիրային լիրիկայից և նոր էջ է բացում հայ պոեզիայում:

Աշակերտներին բաժանում եմ սիրային բանաստեղծությունները, ձևավորվում են հինգ խումբ, և հանձնարարվում է «Կարուսել» մեթոդով գրել «Միլվա Կապուտիկյանի սիրերգությունը» թեմայով ազատ շարադրություն: Հանձնարարվում է տանը լրացնել շարադրանքը և ներկայացնել: